ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 դեկտեմբերի 2025թ. թիվ 788-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի և ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) Լոռու մարզային վարչության հետ համատեղ կազմված աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 02.12.2025թ. թիվ ԴԽ/15.2/41425-2025 հանձնարարականը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2026թ. հունվարի 1-19-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկել Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝

1) Մինչև ս/թ դեկտեմբերի 29-ը կազմել և հաստատել 2026թ. հունվարի 1-ի դրությամբ առկա գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովների կազմերը՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

2) Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2026թ. հունվարի 24-ը ներկայացնել Լոռու մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն և ՀՀ վիճակագրական կոմիտեի Լոռու մարզային վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանի վրա:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-12-02 17:38:30 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. դեկտեմբերի 2
ք.Վանաձոր